

Selected Passages from

Նորին (Գրիգորի Տաթևացոյ) քարոզ վասն յուսոյ. ի բանն առաքելոյ: (Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ:) Հոմ. 5:5 Գլուխ ԺԵ

Հաւատովն հաւատամք ի յԱստուած. եւ յուսովն ըմբռնեմք զԱստուած. եւ սիրովն միաւորիմք առ Աստուած: Վասն այն աստուածային կոչին: Եւ վասն յուսոյ՝ երբէք ինչ հարցանելի է: Նախ՝ թէ զի՞նչ է յոյսն... երկրորդ՝ թէ որպէ՞ս զանազանի յոյսն եւ հաւատն: Երրորդ՝ թէ որպէ՞ս յոյսն ոչ ամաչեցուցանէ:

Վարդապետք այսպէս սահմանեն: Յոյսն՝ է ստոյգ ակնկալութիւն հանդերձեալ բարեացն, յառաջ եկեալ ի շնորհացն Աստուծոյ եւ ի բարի գործոցն:

Զի հաւատն է ի յանցեալն եւ ի հանդերձեալն. եւ յոյսն միշտ ի հանդերձեալն: Զի հաւատամք ստեղծեալ զաշխարհս բանիւն Աստուծոյ. եւ հաւատամք կատարումն առնիլ սոցա: Այլ յոյսն՝ միշտ յետոյ ի հանդերձեալն է: Չորրորդ զանազանին. զի յոյսն միշտ առ բարիսն է. իսկ հաւատն՝ առ բարի հատուցմունսն, եւ առ պատիժն նայի: Դարձեալ զանազանին. զի յոյսն՝ ակն է հաւատոյն. որպէս ակն մարմնոյ:

Տեսցուք զերրորդ հարցումն թէ, որպէս յոյսն ոչ ամաչեցուցանէ: Ասեմք թէ կրկին կերպիւ: Նախ զի՝ չորս ինչ հարկաւոր է յուսոյն: Այսինքն, յուսալին. յուսացողն. յոյսն. եւ յուսալն: Արդ՝ յուսալին է Քրիստոս. եւ յուսացողն մարդ. եւ յոյսն իրն եւ զօրութիւնն. եւ յուսալն գործն եւ ակն ունելն: Յորժամ այս չորսս լինին, նա յոյսն ոչ ամաչեցուցանէ: Դարձեալ՝ առ յուսալին չորս ինչ հարկաւոր է. այսինքն, կարելն, կամիլն, եւ գիտելն, եւ մնալն: Արդ՝ Քրիստոս ամենակարօղ է. այլէ զամենեցունց բարին կամի. եւ նա գիտէ զօգուտն ամենայն մարդոյ. եւ ինքն յաւիտենից մնայ: Վասն որոյ՝ յոյսն զոր առ Քրիստոս ունիմք, ոչ ամաչեցուցանէ զմեզ. ոչ աստ, եւ ոչ ի հանդերձեալն: Այլ մարդիկ տկարք են. եւ չկամեցող. եւ տգէտ. եւ անցաւոր. եւ յոյսն ի նոսա եղեալ՝ անկատար մնայ: